

# LYDIAN ACCUSED OF MISREPRESENTATION IN CANADIAN COURT

Posted on March 24, 2020 by Keghart



Category: [Opinions](#)

Tags: [Alvarez & Marsal](#), [Environment](#), [Justice Geoffrey Morawetz](#), [Lydian.](#), [mining](#), [Ontario Suoerior Court](#)



## Ontario Superior Court informed about misleading information in mining company Lydian's affidavit

**Armenian Environmental Front**, 28 February 2020

### **Photo by AEF**

On February 28, several members of the Armenian Environmental Front (AEF) addressed a letter to Honorable Geoffrey B. Morawets, Chief Justice of the Ontario Superior Court of Justice, Commercial List, specialized in insolvency cases, who presides over Lydian Group's insolvency protection court proceedings. The letter was copied to Alvarez & Marsal, INC the appointed "Monitor" under the "Companies' Creditors Arrangement Act".

Lydian Group is involved in a number of overseas legal proceedings. One is its bankruptcy proceedings in the Royal Court of the Jersey (offshore zone), based on the complaint of Lydian's creditors. The second is Lydian's appeal to the Canadian court through its Canadian subsidiary requesting protection from bankruptcy and extension of the Company's protection to the proceedings in Jersey.

Edward Sellers, the CEO of Lydian Group, assures that the Company's subsidiaries are undergoing restructuring, they are looking for new funding for relaunching the Amulsar projects, and in case this turns impossible, are soliciting interest in financing the Treaty Arbitration; they are also actively attempting to sell the Company. Taking into consideration these efforts of the company, Edward Sellers requests the Court to protect from bankruptcy. The court hearing this case is lead by Justice Geoffrey Morawetz, Chief Justice of the Ontario Superior Justice Court specialized in insolvency cases of companies undergoing restructuring.

The Armenian Environmental Front informed the Court and the Monitor about having detected over two dozen instances of factual misrepresentations, and therefore, material misleading, in the affidavit of CEO Edward Sellers sworn in December 2019. Additional information regarding court decisions affecting Lydian's assets in Armenia, as well as official documentation supporting the above mentioned instances, were also forwarded to the Court.

Lydian Group's Motion Record presented by its lawyers (who are, in fact, also unsecured creditors of the Amulsar project), including the affidavit of Edward Sellers sworn in December 2019, are published in the website of the bankruptcy "Monitor" **Alvarez & Marsal**, Inc. These legal documents include numerous instances of slurs in relation to the Armenian Government and other relevant state institutions. Nevertheless, the Government has not reacted to the above mentioned in any visible way.

Analysing these documents, responding to them and defending the interests of the Armenian citizens and the state are not the tasks of our volunteer activist group. This is the duty of the Government of Armenia. We have been forced to spend weeks requesting for official information

from state bodies in order **to collect evidence** on this matter, whereas all pieces this evidence were fully available to and under the disposition of the Government.

It is also a responsibility of the Members of Parliament to raise the issue and ask queries to the members of the Government in case the latter fails to perform its duties. Both institutions have failed to fulfill their direct responsibilities even though our group had been informing them about the matter by sending letters and publishing information and sources of relevant files.

Not only has the Government been irresponsible in this matter, but also another state institution, the Environmental and Mining Inspection Body (EMIB) has consistently failed to participate in any of the court hearings in the framework of "Lydian Armenia's" claims against EMIB. The expected result of this behavior, the Administrative court's ruling upheld the claim of Lydian Armenia and declared invalid eight of the ten points of the EMIB's order according to which Lydian Armenia was in breach of Armenian legislative requirements including that Lydian Armenia had engaged in illegal mining activities during the construction phase of the Amulsar Project. Although the **EMIB announced** that it finds the decision of the Administrative Court in breach of law and that it is going to appeal the court decision to the higher court instance, valid questions remain - why did the EMIB not attend ANY of the court hearings on this matter and protect its supervisory decisions, and what else did they expect from the Administrative court in a situation of their inaction?

Judging from the behavior of the state institutions, we have grounds to claim that either the Government of Armenia positions itself in support Lydian Group or it can be blamed for inaction on this matter, which is equated to supporting the Company. Not only has the Government not made sanctions in relation to misleading conducted by the company for the past 8-9 years, it is also consistently erasing the efforts of other state and non-state actors.

*[Armenian Environmental Front \(AEF\) civil initiative](#)*

Email: [armecofront@gmail.com](mailto:armecofront@gmail.com)

## **Օստարիոյի դատարանին նամակ է ուղարկվել Լիդիան ընկերության ցուցմունքներում առկա փաստական խեղաթյուրումների մասին ՀԲՃ**

Փետրվարի 28-ին Հայկական բնապահպանական ճակատի մի շարք անդամներ գրություն են ուղարկել Օստարիոյի արդարադատության գերագույն դատարանի սնանկության գործերով դատավոր Ջեֆրի Բ. Մորավեցին, ով քննում է Լիդիան ընկերությունների խմբի՝ սնանկությունից պաշտպանվելու գործը, ինչպես նաև այս գործով սնանկության «մոնիտոր» (կառավարիչ) ճանաչված Alvarez & Marsal ընկերությանը:

Լիդիան ընկերությունների խումբը օտարերկրյա մի շարք դատական գործերում է ներքաշված. նախ՝ օֆշորային Ջերսիում ընթանում է նրա սնանկության գործը իր պարտապանների հայցով, իսկ կանադական դատարաններում Լիդիանը փորձում է պաշտպանվել սնանկությունից իր նոր գրանցված կանադական դուստր ընկերության

**Վիճոցով և այդ պաշտպանությունը տարածել Ջեֆրի Մորավեցիի ընթացող գործի վրա:**

Լիդիան խմբի գործադիր տնօրեն Էդվարդ Սելլերսը դատարաններին հավաստիացնում է, որ խմբի անդամ ընկերությունները վերակազմավորվում են, փնտրում Ամուլսարի հանքարդյունաբերական ծրագիրը վերագործարկելու համար նոր ֆինանսավորում, անհնարինության դեպքում՝ արբիտրաժային ծախսերի համար ֆինանսավորում (վարկավորում), ինչպես նաև ակտիվորեն փնտրում են ընկերության գնորդներ: Հաշվի առնելով Լիդիանի այս ջանքերը՝ տնօրեն Սելլերսը հայցում է պաշտպանություն սնանկությունից: Գործը քննում է անվճարունակ ընկերությունների վերակազմավորման հարցերով մասնագիտացած սնանկության դատավոր Ջեֆրի Մորավեցիի գլխավորած դատարանը:

Հայկական բնապահպանական ճակատը գրություն է հղել կանադական դատարան ու սնանկության «մոնիտոր» ընկերությանը՝ տեղեկացնելով Լիդիան ընկերությունների խմբի գործադիր տնօրեն Էդվարդ Սելլերսի 2019թ-ի դեկտեմբերի ցուցմունքում հայտնաբերված շուրջ երկու տասնյակ փաստական խեղաթյուրումների և հետևաբար՝ դատարանին ապակողմնորոշելու մասին: Ներկայացվել են նաև հավելյալ տեղեկություններ ՀՀ դատարանում Լիդիանի գույքի վերաբերյալ կայացրած որոշումների մասին, ինչպես նաև վերոնշյալ պնդումները հաստատող պաշտոնական փաստաթղթեր:

Լիդիան ընկերությունների խմբի իրավաբանների (որոնք նաև պարտատեր են) հայցադիմումի փաթեթը, ներառյալ 2019թ-ի դեկտեմբերին Էդվարդ Սելլերսի՝ երդմամբ հաստատված ցուցմունքը, հրապարակված են սնանկության «մոնիտորի»՝ [Alvarez and Marshal-ի](#) կայքում: Այս իրավական փաստաթղթերի բազմաթիվ կետերում զրպարտիչ տեղեկություններ են ներկայացվում ՀՀ կառավարության և այլ պետական մարմինների մասին, որոնց վերջիններս որևէ կերպ չեն արձագանքել:

Այս փաստաթղթերը վերլուծելը, դրանց արձագանքելը, ՀՀ քաղաքացիների և պետության շահերը պաշտպանելն իրականում մեր կամավորական քաղաքացիական նախաձեռնությունը չպետք է աներ. սա ՀՀ կառավարության ուղիղ պարտականությունն էր: Մենք ստիպված ենք եղել շաբաթներ շարունակ [տեղեկություններ](#) հայցել պետական մարմիններից՝ ապացույցներ հավաքագրելու համար, այնինչ Կառավարությունն այդ բոլոր տեղեկություններին ի սկզբանե տիրապետում էր:

Կառավարության՝ իր պարտականությանների մեջ թերանալու պարագայում, նման կարևոր խնդիրը բարձրաձայնելն ու Կառավարության անդամներին հարցադրումներ ներկայացնելը նաև ԱԺ պատգամավորների պարտականություններից է: Երկու մարմիններն էլ չեն կատարել իրենց գործառույթը նույնիսկ այն բանից հետո, երբ մենք նամակներով և լրատվամիջոցներով իրազեկել ենք խնդրի և գործով առկա

## Վաստաթղթերի արդյունքների մասին:

Ի հավելումն այս հարցում նման անպատասխանատու մոտեցման՝ մեկ այլ պետական մարմին՝ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինն էլ, հետևողականորեն ոչ մի անգամ չի ներկայացել «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից իր դեմ հայցերի շրջանակներում կայացած դատական նիստերին: Արդյունքում՝ 2020թ. փետրվարի 26-ին Վարչական դատարանը բավարարել է «Լիդիան Արմենիայի» ևս մեկ հայց ու անվավեր է ճանաչել Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի 24.08.2018թ. թիվ 30 ստուգման ակտում նշված 10 կետերից 8-ը: Չնայած Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմինը [հայտարարություն է տարածել](#), որ Վարչական դատարանի վճիռը իրավաչափ չի համարում, և այն բողոքարկվելու է Վերաքննիչ վարչական դատարան՝ անհասկանալի է, թե դատական նիստերին հետևողական կերպով չներկայանալու պարագայում ուրիշ ի՞նչ որոշում կարելի էր ակնկալել դատարանից:

Դատելով պետական մարմինների այս վարքագծից՝ մենք գնահատում ենք, որ ՀՀ կառավարությունը կա՛մ շարունակում է աջակցել Լիդիան ընկերությանը, կա՛մ այս հարցում մատնված է անգործության, ինչն ինքնաբերաբար աջակցություն է: Կառավարությունը ոչ միայն պատժամիջոցներ չի կիրառում այդ ընկերության նկատմամբ անցած 8-9 տարիների ընթացքում պետությանն ու հանրությանն ապակողմնորոշելու և վնաս հասցնելու համար, այլև հետևողականորեն փոշիացնում է տարբեր պետական և ոչ-պետական մարմինների արած աշխատանքի արդյունքները:

[Հայկական բնապահպանական ճակատ կամավորական նախաձեռնություն](#)

Էլ. փոստ՝ [armecofront@gmail.com](mailto:armecofront@gmail.com)

**There are no comments yet.**